Տիգրան Ա. (137-95)

Ընթերցողը պիտի նկատէ, որ այլ հետազօտողներու նման, մենք ալ Արտաւազդ Ա.ի գահատարիները ճշդած ենք բաց մը գոցելով, մեր պարագային՝ 11 տարուան։ Սակայն, այս «բացը» յարաբերաբար աւելի մօտ է Պատմահօր --որ, չմոռնանք, միակ սկզբնաղբիւրն է-- հաղորդումին, աւելի տրամաբանական տարիքի մը թագաւորեցնելով Տիգրան Ա.ը (իր ծնունդը հաշուելով Ք.Ա. 185-180 թուականներուն, Արտաշէսի հիսնամեայ արշաւանքներէն ետք) եւ ոչ թէ 65-70 տարեկանին, երբ արդէն 25ամեայ զաւակ մը ունէր։ Միւս կողմէ, մենք նոյնութեամբ կը պահենք Արտաշէս Ա.ի եւ Տիգրան Ա.ի խորենացիական գահատարիները։

Մեր կարծիքով, առկայ փաստերով կարելի չէ վերաքննել Արտաշէսեան առաջին չորս թագաւորներու յաջորդականութիւնը։ Սակայն, ժամանակագրական ճշդումներ թերեւս արտօնելի են, տուեալներու սակաւութեան եւ պայմանական բնոյթին պատճառով։ Այս պարագային ալ, ինչպէս նկատած է ընթերցողը, Մովսէս Խորենացիի հայթայթած տեղեկութիւնները որոշ օգուտ կրնան մատուցանել։

Պէտք է յուսալ, որ ապագային նոր փաստեր յաւելեալ լոյս սփռեն Ք.Ա. Բ. դարու մեր պատմութեան իրադարձութիւններուն վրայ եւ հաստատեն կամ հերքեն պատմագիտական ընթացիկ տեսակէտները։

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆՔ

Քրիստոսի Ս. Յարութեան եւ Զատիկի տօնակատարութեանց առիթով, Պատրիարք Սրբազան Հօր շնորհաւորանքի եւ բարեմաղթութեանց գիրերը յղուեցան Հոգեւոր եւ Կառավարական պետերուն, որոնց շնորհաւորագիրերը ընդունած է.-

- Ամենայն Հայոց Ներընտիր Հայրապետին, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսին։
- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Գարեգին Պատրիարք Գազանճեանին։
- Հռովմէական Կաթոլիկ Եկեղեցւոյ Քահանայապետին՝ Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Պապին։
- Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս եկեղեցւոյ Ամեն. Տ. Տ. Ալէքսէյ Բ. Սրբազան Պատրիարքին։
- Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Նախագահ Տիար Ռոպերթօ Կիւլպէնկեանին։
- Թեմական Առաջնորդներուն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներուն։

digitised by A.R.A.R.@

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

ST. SIEGE D'ETCHMIADZINE
CATHOLICOSSAT

190 11 Ապրիլի 1995

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

Այս գիրը առաջին խօսքն է զոր կ'ուղղենք որպէս նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոս Մայր Աթոռի բոլոր թեմերուն: Զայն կ'ուղարկենք Ձերդ Ամենապատուութեան և Երուսաղէմի հայ պատրիարքութեան ուխտեալ Միաբանութեան և հաւատացեալ ժողովրդեան:

Ի՜նչ իմաստալից ու թելադրական զուգադիպութիւն որ այս առաջին խօսքը մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի յարութեան հրաշափառ տօնին առիթով է որ կ'ուղղենք Ձեզի:

Նախ ջերմօրէն կը շնորհաւորենք ձեզ բոլորդ Զատկի տօնին բերկրալից առիթով: Էջմիածնի Մայր Տաճարին մէջ Մեր ձայնը կը վերառաքենք առ յարուցեալ Փրկիչն մեր և կը հայցենք որ մահուան վրայ տարած Իր յաղթանակի առիթով վերանորոգէ ձեր կեանքը, հաւատքի և յոյսի շունչը առատացնէ ձեր հոգիներուն մէջ:

Յարութեան տօնը գագաթնակէտն է մեր քրիստոնէական կեանքին, որովհետև յարութեան հրաշազան դէպքը Քրիստոսի քարոզութեանց, պսակումն է որով չարիքներուն չարիքը նկատուած մահը խափանուեցաւ և յաւիտենութեան յոյսը ծաղկեցաւ ու պտղաբերեցաւ:

Հայութեան կեանքին մէջ յարութեան շունչը հրաշքներ գործեց: Մեր պատմութեան բոլոր խաչերուն և գողգոթաներուն վրայ յարութեան լոյսին հորիզոնը միշտ բացուեցաւ որպէս կեանքի վերանորոգման ոյժ: Այս տարի, Զատկի տօնէն մէկ շաբաթ ետք, պիտի նշենք հայկական Մեծ Եղեռնի հայութեան դէմ գործուած ցեղասպանութեան 80-ամեակը, որ մեզի համար պէտք է նկատուի այլևս ոչ այնքան սուգի օր որքան յաղթանակի ոգեկոչման առիթ: Ահա վերանկախացած է մեր հայրենիքը, վերստին կեանքի է կոչուած հայկական գերիշխան պետութիւնը, նոր սերունդներ են ծնած: Վերապայծառակերպուած է հայ կեանքը յարութեան հրաշագործ զօրութեամբը:

"Փա՛ռք յարութեան քո Տէր"

Թող յարութեան ոյժը տարածուի Ձեր թեմի հաւատացեալ ժողովրդեան կեանքին մէջ:

Ողջ լերուք ի Տէր զօրացեալք շնորհք Ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

digitised by

SECRETARIAT OF STATE

No. 369.300/G.N.

FROM THE VATICAN, May 9, 1995

Your Beatitude,

His Holiness Pope John Paul II was very pleased to receive your kind Easter greetings and has asked me to thank you in his name.

During this glorious Season of life, His Holiness prays that the joy and peace of Christ's Resurrection will fill Christians with renewed hope and steadfast resolve in making the Lord's salvation known to all. In a special way, as the Second Millennium draws to a close, he implores with ever greater insistence the grace of Christian unity, that our common witness may be more effective in proclaiming God's Kingdom.

With these sentiments, I am pleased to convey His Holiness' cordial best wishes and fraternal greetings in the Risen Lord.

Sincerely yours in Christ,

+ Q. Card. Sodano

Secretary of State

His Beatitude Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem
Armenian Patriarchate
St. James Monastery
P.O. Box 14001
91190 Jerusalem

digitised by A.R.A.R.@

Патриарх
Московский
и всея Руси

119034 Москва, Чистый пер. 5

Его Блаженству,
Блаженнейшему ТОРКОМУ МАНУКЯНУ,
Армянскому Патриарху Иерусалима

Ваше Блаженство,

ХРИСТОС ВОСКРЕСЕ !

Днесь всякая тварь веселится и радуется, встречая и прославляя Божественного Победителя смерти, узы адовы сокрушившего и нас с Собою совоздвигшего.

"Мы погреблись с Ним крещением в смерть, дабы, как Христос воскрес из мертвых славою Отца, так и нам ходить в обновленной жизни" (Рим.6,4), ибо "на сие самое и создал нас Бог и дал нам залог Духа" (2 Кор.5,5).

Следуя традиционному обычаю, спешим разделить с Вами нашу радость о Христе Воскресшем, горячо приветствовать Вас в сей нареченный и святый день и засвидетельствовать Вам нашу неизменную о Христе Воскресшем любовь.

От души желая, чтобы Воскресший тридневно от Гроба Спаситель мира сподобил Вас многие годы в здравии душевном и телесном встречать этот праздников Праздник, немолчными гласы воспевать волею за всех закланного Агнца Божия и всегда пользоваться ниспосылаемыми свыше обильными и благодатными плодами Его спасительного Восстания.

С любовью о Христе Воскресшем

ПАТРИАРХ МОСКОВСКИЙ И ВСЕЯ РУСИ

Пасха Христова
1995 г.

digitised by A.R.A.R.@